

և Աննայ փայտը ձևաքը դիմաւորեր է 'Նորին Ա. վեհափառութիւնը, որ ջերմեռանդութեամբ Աննայ փայտը համբուրեր, և եկեղեցին մանկելով Վլադիմիրի մատրան առջև ծունկի վրայ աղօթեր է: Յետոյ Պատրիարքարան ելնելով, որ շքեղագէտ զարդարուած էր, հինգ բոպէի չափ նստեր է, և այն տեղ զոնուած հնութիւնները դիտելէ ետև, Ս. Պատրիարքին շնորհակալութիւն յայտնելով մեկներ է Հրէից Աինակոկայն երթալու համար:

Մասիս Թիւ 456

Սամաթիոյ Թաղական Խորհրդոյ հրաւրանօք, խորհրդարանը գնաց, և քարոզ մը խօսեցաւ: Սամաթիոյ մէջ այս առթիւ հանդէսներ կատարուեցան ի պատիւ 'Նորին բարձր Արքայնութեան:

Արուսաղիմոյ պատրիարքական նախորդ փոխանորդ Աէֆէրեան Վեր. Տ. Սիմէօն Սեպիսիոսը Պօլսոյ պատրիարքական խորհրդական (միւսթէշար) անուանեցաւ, Խաան ժողովոյ որոշմամբ և ամեն Ս. Պատրիարք Հօր հաճութեամբ:

Փունջ Թիւ 464

### ՄԱՀԱՅՈՒՅՍԿԻ

Անցեալ ամսոյ մէջ Ս. Եթողոյս երկու միաբանները առ Եստուած փոխեցան:

Առաջինն է՝ Աղիազար Եբեղայ Խաչատրեան Վաղարշապատեցի, որ ծնած է 1840 թուականին և կուսակրօն քահանայ ձեռնադրուելով վեղար ընդունեցաւ 1867 մարտի մէջ: և նոյ. 15-ին ի կենաց զրկուելով, յաջորդ օրը միաբանութեան զերեզմանառան մէջ ամփոփուեցաւ մարմինը:

Երկրորդն է Խրայէլ Եբեղայ Տէր Պետրոսեան Բլեկի, որ ծնած է 1840 թուականին, և կուսակրօն քահանայ ձեռնադրուելով վեղար ընդունեցաւ 1864 օգոստոս ամսոյ: Վախճանեցաւ նոյեմ. 26-ին, և քանի ամս՝ ի վեր Ս. Պայանէ վանուց վանահայր զանուելով, յիշեալ վանուց հիւսի ային կողմը մաւմինը թաղեցաւ 27-ին:

Ամեն Ս. Պատրիարք Հայրը կիւրախ է օրը ազգային Հիւանդանոց երթալով, այցելութիւն քրաւ բոլոր պատասպարելոց: Յետոյ

### ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՍԻՆՕ ԴԻ

19 'Նոյ: Համաձայն փառագանաց և խնդրանաց ժողովրդեան Յաջորդութեան 'Նուխուրի վեճակի, Յաջորդ Երժանա. Երիտասկէս Վարդապետի առաջարկութեան լուծումն շնորհեցաւ՝ իւր երաշխաւորութեան ներքեւ՝ 'Նուխի և Երէշ դաւաւկաց Աեղրոն՝ Խաչկաչէն, և Խաչմալու Վարալայ Վաւաւկաց կեղրոն՝ Վայքայ գիւղօրէից մէջ մէն մի Վաղրոց հաստատել մերազնեայ ուսումնակարօտ մանկաւոյն դատարարութեան և լուսաւորութեան համար:

21. — Համախուրդ վեճակին Վիւլեթան գեղջ Յարութիւն Վահանայն Այվազեանց, յաղագս անգոսնելի և անզուսպ արբեցութեանն պատժեցաւ՝ առանց փրկոնի և տեղւոյն Ս. Ակեղեցւոյ դրան մօտ վեցամսեայ ապաշխարանաց ենթարկուելով մինչև յուղղութիւն վարուցն և ցկատարեալ ապաշաւութիւն յանգոսնելի ընթացիցն:

24. — Հրամանադրեցաւ Աճախատրիային Երցախոյ, Երժ. Երբահամ Վարդապետը համաձայն խնդրանաց մերազնեայ ժողովր-